Արձանագրության 3
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/80 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 21.05.2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալբաբյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Պողոսյան /գնահատող/, Է. Ղազարյան /գնահատող/
Ն. Մուկուչյան /բացող/, Մ. Ջալաթյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Ա. Բալբաբյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց հարկային պարտավորություն:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակիցների կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկայի իրենց կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված բնութագրին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Բալբաբյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Սեմուր ընդ Կո ՍՊԸ	Բավարար
Նարսան ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/80 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Բալբաբյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել 1-ին չափաբաժնի մասով՝ «Նարսան» ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնի մասով Սեմուր ընդ Կո ՍՊԸ-ին և վերջիններիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Բալբաբյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բալբաբյան

Անդամներ՝ ---------- Ն. Մուկուչյան

---------- Է. Ղազարյան

---------- Մ. Ջալաթյան

---------- Ն. Պողոսյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան